ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 212-Ա « 15 » հունվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի Հ.2236-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված 07.12.2026թ. եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 19.05.2025թ. հ.Կ-19052025-01-0185 որոշումը, ինչպես նաև քաղաքացիներ Մարտին և Արթուր Սողոմոնյանների 21.08.2025թ. հ.Դ-91828-25 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2024 թվականի հունիսի 19-ի «Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Գոգոլի փողոց հ.4/3 հասցեի բնակելի տանը կից հողամասի նկատմամբ Մարտին Ջանիբեկի Սողոմոնյանի և Արթուր Սամվելի Սողոմոնյանի իրավունքները վերականգնելու մասին» հ.2236-Ա որոշման նախաբանում՝ «ժառանգության վկայագիր հ.2417)» բառերը փոխարինել «ըստ օրենքի ժառանգության իրավունքի 18.05.2023թ. հ.2411 վկայագիր)» բառերով:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ